

Հաստատում են

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն,
պ.գ.թ. զոհգենտ Ռ. Ղազարյան

22.06.2022թ.

Կ Ա Ր Ծ Ի Ք

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի 2022թ. հունիսի 22-ին կայացած թիվ 4 նիստի:

ԲԱԺՆԻ ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ. ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի վարիչ, պ.գ.թ., զոհգենտ Լ. Հովսեփյանը, բաժնի առաջատար գիտաշխատողներ Հ. Ստեփանյանը, Վ. Տեր-Մաթևոսյանը, ավագ գիտաշխատող պ.գ.թ. Ք. Մելքոնյանը, գիտաշխատողներ Տ. Մանուկյանը, Կ. Սահակյանը, կրտսեր գիտաշխատող Վ. Թորոսյանը, ավագ լաբորանտ Թ. Աղամալյանը:

ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի հայցորդ Սամվել Մարտունի Ռամազյանի «Քյոռոլլի» էպոսը և պատմագեղարվեստական արձագանքները» (գիտական ղեկավար՝ բ.գ.դ. Ա. Ե. Պետրոսյան) թեկնածուականատենախոսության քննարկումը:

ԵԼՈՒՅԹ ՈՆԵՑԱՆ. ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի վարիչ, պ.գ.թ., զոհգենտ Լ. Հովսեփյանը, առաջատար գիտաշխատողներ Հ. Ստեփանյանը, Վ. Տեր-Մաթևոսյանը, գիտաշխատող Կ. Սահակյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ Սամվել Ռամազյանի «Քյոռոլլի» էպոսը և պատմագեղարվեստական արձագանքները» ատենախոսության թեման գրականագիտության ոլորտում ունի գիտական և արդիական նշանակություն՝ հատկապես հայկական պատմագեղարվեստական արձագանքների ուսումնասիրման տեսանկյունից: Ուսումնասիրվող թեման արդիական է, քանի որ թյուրքական այլ էպոսների ու հերոսական ասքերի համեմատ այն իր տարածվածության տեսակետից աննախադեպ է: Վերջինս գուցե հերթական անգամ իր դերն է խաղացել հարևան ժողովուրդների բանավոր և գրավոր բանահյուսական երկերի պահպանելուն, տարածվելուն, որը ժամանակի ընդունված վիճակներից է եղել: Իհարկե, այն ունեցել է գործիքների իր ընդունված ձևերը (աշուղներ, թափառող հեքիաթասաց-երգիչներ՝ իրենց երաժշտական գործիքներով, տարբեր լեզուներով արտահայտված պատմությունների տարբերակներով, տվյալ վայրին, մթնոլորտին, տարբեր ժողովուրդ-ունկնդիրների

միջավայրին, կյանքին, սովորույթներին ու պատմական անցքերին հարմարեցված, ձևափոխված տեսքով): Դժվար է գտնել այս կամ այն հերոսական կերպարի կամ սիրային քնարական պատմության իսկական, առաջին տարբերակն իր ծագման ու զարգացման մանրամասներով: Իհարկե, հարակից աղբյուրներն ունեն իրենց որոշակի ներդրումը գրականագիտական ուսումնասիրության որոշակիության, լիարժեք ուսումնասիրության առումով: Հաճախ նույն հերոսը կամ թափառող սյուժեները տարբեր ժողովուրդների կողմից սեփականացվում են, հարմարեցվում իրենց միջավայրին հարիր պատմական կամ այլ մանրամասներով և անգամ դառնում որոշակի պայքարի առարկա: Այս ամենը հատուկ է բոլոր ժողովուրդների բանահյուսական ստեղծագործություններին և միայն ժամանակի ու բանագետների, անգամ մատենագրական ժառանգության շնորհիվ է հնարավոր դառնում դրանց պատմահամեմատական ուսումնասիրությունը, պատմական տեսքի հնարավոր վերականգնումը: Այն ուսումնասիրողից պահանջում է երկի բազմալեզու և տարբեր ժամանակյա հատվածների համադրում և քննարկում: Այսպիսին է նաև այսօրյա մեր խնդրո առարկա գիտական թեզը:

Ս. Ռամազյանի ատենախոսությունն ինքնուրույն գիտական աշխատանք է, որը գրված է գիտական պատշաճ մակարդակով՝ տարաբնույթ աղբյուրների ու գիտական գրականության հարուստ բազայի հիման վրա:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, որոնք իրենց հերթին բաժանվում են ենթագլուխների, եզրակացությունից, համառոտագրությունից, օգտագործված գրականության ցանկից:

Ներածությունը պատկերացում է տալիս ատենախոսության թեմայի արդիականության ու նորույթի, նպատակի ու գիտական հարցադրումների, առաջադրված հետազոտական խնդիրների, մեթոդաբանության, թեմայի ուսումնասիրվածության աստիճանի և օգտագործված գրականության տեսության մասին:

Վերոնշյալ ատենախոսության նորույթն այն է, որ այն առաջին փորձն է հնարավորինս համակողմանի և ամբողջականորեն ներկայացնել «Քյոռօղլի» էպոսի հայկական պատմագեղարվեստական արձագանքները և լրացնել դրանում առկա բացը: Աշխատանքում հնարավորինս ամբողջացվել են էպոսի պատմական նախատիպեր ունեցող անձանց ու պատմական իրադարձությունների մասին հայկական պատմագեղարվեստական արձագանքները, կատարվել դրանց զուգադրական ու քննական վերլուծությունը տարբեր աղբյուրների ու նյութերի հետ, ինչը կարևոր է նաև հայկական արձագանքների եզակիությունը ի ցույց դնելու առումով:

Ելույթ ունեցողները կարևորեցին նաև ատենախոսի օգտագործած աղբյուրները և գիտական գրականությունը: Նշվեց, որ ատենախոսը բարեխղճորեն ուսումնասիրել է թեմայի վերաբերյալ հայերեն, թուրքերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն տարաբնույթ աղբյուրներ, գիտական գրականությունն ու

ուսումնասիրությունները, որոնցից որոշները, փաստորեն, առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ: Այդուհանդերձ, ցանկալի կլիներ գրականության տեսության մեջ ներառել նաև վերջին տարիներին լույս տեսած թեմատիկ գիտական գրականությունը, ինչպես օրինակ՝ Քյոռոզլուփն նվիրված Սաբրի Քոզի 2014թ. հրատարակված ուսումնասիրությունը:

Ելույթ ունեցողները անդրադարձան ատենախոսության առաձին գլուխների բովանդակությանը: Առաջին գլխում՝ բաղկացած 5 ենթագլխից («Քյոռոզլի» էպոսը և XVII դարի հայկական պատմագեղարվեստական արձագանքները) հեղինակը ներկայացնում է Առաքել Դավրիժեցու, Ավետիք Տիգրանակերտցու հաղորդումները, որոնք վերաբերում են էպոսի կերպարների պատմական նախատիպերին: Գլխում քննարկվում են թեմային առնչվող Գրիգոր Դարանաղցու և մանր ժամանակագիրների հաղորդումները, օսմանյան և այլ աղբյուրների հետ համադրությամբ: Բացի այդ, ներկայացվում են Ազարիա վարդապետ Սասնեցու հաղորդումները ջալալիների առաջնորդների և նրանց ասպատակությունների մասին, ինչպես նաև մանրամասն քննարկվում և վերլուծվում XVII դ. մշակութային գործիչ Երեմիա Քյոմուրճյանի՝ թեմային վերաբերող հաղորդումները:

Ատենախոսության երկրորդ գլխում («Քյոռոզլի» էպոսը և XVIII դարի հայկական պատմագեղարվեստական արձագանքները՝ բաղկացած երեք ենթագլխից) ատենախոսը ներկայացնում և վերլուծում է XVIII դարի մատենագիր Եղիա Մուշեղյանի (Եղիա Կարնեցի) հաղորդումները Քյոռոզլու մասին, ով իր «Գիրք խաղից երաժշտականաց» տաղարանում ավելի ընդարձակ տեղեկություններ է հաղորդում Քյոռոզլու վերաբերյալ, քան հիշատակված բոլոր հայ մատենագիրները: Այս գլխում ներկայացվում են նաև XVIII դ. մանր ժամանակագրությունների հակիրճ տեղեկությունները, XVIII դ. հայ ազգային-ազատագրական պայքարի ականավոր գործիչ Հովսեփ Էմինի հիշատակությունները 1792 թ. Լոնդոնում հրատարակված ինքնակենսագրական երկում:

Երրորդ գլխում, որը բաղկացած է չորս ենթագլխից, («Քյոռոզլի» էպոսը և XIX-XX դարերի հայկական պատմագեղարվեստական արձագանքները) ընդհանուր տեղեկություն է տրվում էպոսի հայկական տարբերակների մասին, որոնցից հայտնի են Վանի, Մոկսի, Բաշկալայի, ինչպես նաև Արևելյան Հայաստանում տարբեր ասացողներից XX դ. սկզբին գրառված տասնյակ տարբերակները: Ներկայացվում են էպոսի՝ Ռափայել Պատկանյանի և Ղազարոս Աղայանի հայտնի գրական մշակումները, ովքեր Քյոռոզլուն վերագրում են հայկական ծագում: Այս գլխում ներկայացվում են XIX դ. վերջից և XX դ. սկզբից հայտնի աշուղական փոխադրությունները, մասնավորապես, Ջամալիի (Մկրտիչ Տալյան) և Խայաթի (Սուքիաս Ջահրիյան): Ներկայացվում են նաև հայտնի անդրադարձները հայ գրականության և երաժշտության մեջ, որոնք համադրվում են թուրք բանասիրության առկա նյութերի հետ:

Չորրորդ գլխում (Հայկական ազդեցությունը պատմագեղարվեստական արձագանքների համատեքստում), որը բաղկացած է հինգ ենթագլխից, ներկայացվում է «կույրի որդի» առասպելի և ծիու պաշտամունքի վերլուծությունը՝ հայ և օտար ուսումնասիրողների առաջադրած տեսությունների քննարկմամբ: Ներկայացվում են «Քյոոզլի» էպոսի գործող անձանցից Քաչալ Համգայի կերպարի վերլուծության արդյունքները՝ հաշվի առնելով թուրքական պատումներում նրան հայկական ծագում վերագրելը: Այս գլխում հեղինակը վերլուծում է վաճառականի (Բեզիրգենի) կերպարը, էպոսի արևմտյան և արևելյան տարբերակներում նրա հետ կապված բնորոշ դրվագը, համադրվում և ներկայացվում են Քյոոզլու որդեգիր այվազի կերպարը, նրա առևանգման դրվագը, համապատասխան պատմական վկայությունները և այլն: Չորրորդ գլխի վերջին ենթագլխում հեղինակը նկարագրում է Քյոոզլու պատերազմը հայերի դեմ, Հայոց թագավորի գերեվարումը: էպոսի թուրքական պատումներում հանդիպում են հայազգի կերպարներ, որոնց բացասական գծեր են վերագրվում, մինչդեռ տվյալ դեպքում խոսքը հայկական պետականության և Հայոց թագավորի դեմ պայքարի մասին է:

Եզրակացությունում ամփոփվում են ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները:

Ս. Ռամազյանի ատենախոսության թեման ունի նաև կիրառական նշանակություն էպոսի հետագա պատմաբանասիրական ուսումնասիրությունների գործում: Այն ամբողջապես կամ մասնակի կարող է օգտագործվել ԲՈՒՀ-երում, մասնագիտական ֆակուլտետներում արևելյան և հատկապես թուրքական գրականության համապատասխան դասընթացներում և հրատարակվելիք ձեռնարկներում:

Ատենախոսության մի շարք դրույթներ, եզրահանգումներ արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված 8 հրապարակումներում:

Սեղմագիրը լիովին արտացոլում է ատենախոսության բովանդակությունը:

Այնուամենայնիվ, աշխատանքի հետ կապված կան որոշ դիտարկումներ և առաջարկներ: Մասնավորապես.

1. Ինչպես նշվեց, կատարվել է աղբյուրագիտական լայնածավալ ուսումնասիրություն, սակայն ներածության մեջ թեմայի գիտական արդիականության և նպատակի հիմնավորման վերաբերյալ շարադրանքը և ձևակերպումները ամբողջապես չեն արտացոլում ատենախոսի կատարած համակողմանի հետազոտական աշխատանքը:
2. «Ադրբեջան» անվանման օգտագործումը առանձին, առանց հյուսիսային կամ հարավային, կամ այլ բառերի հետ խաբկանք է ստեղծում այսօրվա այդ անունը կրող վայրի հետ: Մենք կնախընտրեինք *Ադրպատականի* ավելի հաճախ օգտագործումը, թեև մի առիթով հեղինակն իր բացատրությունը տալիս է: Այնուամենայնիվ պատմական տերմինի օգտագործումը ավելի օգտակար կհամարեինք: Տես՝ էջ 4, էջ 33՝ «Առ.

Դավրիժեցու վկայությունից երևում է, որ պատմական Քյոռոլին գործել է Հայաստանում և Ադրբեջանում»:

3. Աշխատանքը կշահեր, եթե բոլոր գլուխներն ու ենթագլուխներն ավարտվեին հեղինակի եզրափակող ու ընդհանրացնող ամփոփումներով: Օրինակ՝ 49, 91, 104, 123 էջերում ամփոփումները բացակայում են:
4. Առաջարկում ենք տեքստում, տողատակերում ուշադիր լինել թուրքերեն I (i) տառերի գրելաձևին: Առանց կետի դրանք ը- են կարդացվում: Օրինակները շատ են (էջ 42, տողատակեր՝ 118, 120, 128 և այլն):
5. Հետագա աշխատանքներում, կարծում ենք, կարևոր կլինի արցախյան պատումների ու գրույցների վերաբերյալ առանձին համակողմանի ուսումնասիրությունը:

Վերը նշված դիտարկումները չեն ազդում ատենախոսության ընդհանուր որակի ու գիտական արժեքի վրա: Այսպիսով՝ քննարկվող ատենախոսությունը կարելի է համարել «Քյոռոլի» էպոսի պատումների, հայկական պատմագեղարվեստական արձագանքների քննական ու համեմատական ուսումնասիրությանը նվիրված հաջողված հետազոտություն:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Սամվել Մարտունի Ռամազյանի «Քյոռոլի» էպոսը և պատմագեղարվեստական արձագանքները» խորագիրը կրող թեկնածուական ատենախոսությունը բավարարում է Ժ.01.07 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությանը թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
Թուրքիայի բաժնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ



Լ. Հովսեփյան

Հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
գիտական արտուղար, պ.գ.թ.



Ե. Հարությունյան

22.06.2022թ.

